

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի համար մարտնչած ու զոհված հայորդիների հիշատակի առջև խոնարհվենք նույն ակնածանքով, ինչպես խոնարհվում ենք մեր ազգային պատմությունից հայտնի մյուս հերոսների հիշատակի առջև:

ՀԻՆԱԿԵՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ «ՍՅՈՒՆԻԱՅ ԵՐԿԻՐ»
ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան
Շահումյան 20/32, 3901:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01U 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ:

ISSN 1829-3468
20010
9 771829 346006

**Մայիսի 9-ը
խորհրդանշում է
մեր պատմության
երկու փառապանծ
դրվագ՝ 1941-
45թթ. Հայրենական
մեծ պատերազմի
ավարտը եւ Շուշիի
ազատագրումը:**

ՀԻՆԱԿԵՐԻ, 7 ՄԱՅԻՍԻ 2020Թ.
№ 10 (526)


Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Մեղրի, Մեծ հայրենականում զոհված մեղրեցիների հիշատակը հավերժացնող հուշարձան

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ



ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ

Գարուն բացվեց, գարուն եկավ,
Անձրեի տեղ արյուն եկավ,
Մայր աղավնու խաղաղ բույնը,
Ձագուկ փախցնող ուրուրն եկավ:

Արծիվները վեր խոյացան,
Սեւ-սեւ ամպերն իրար անցան,
Նորեն խաղաղ գարուն բացվեց,
Շատ-շատերը վերադարձան,
Իսկ շատերն էլ հուշեր դարձան...

Անմար լույսեր հոգիների՝
Իմ քարակերտ հուշարձաններ,
Նոր պատմություն սխրանքների՝
Իմ հրակերտ հուշարձաններ:

Սերունդները միշտ ուժ կառնեն,
Հարս ու աղջիկ մոմ կվառեն,
Ես էլ նրանց հետ կվառեմ,
Հուշարձաններ, հուշարձաններ:

Հասակներն եք քաջ-քաջերի,
Փայլ ու կրակ կայծակների,
Հազար երազ, մուրազների,
Իմ փառակերտ հուշարձաններ:

Արծիվները վեր խոյացան,
Սեւ-սեւ ամպերն իրար անցան,
Նորեն խաղաղ գարուն բացվեց,
Շատ-շատերը վերադարձան,
Իսկ շատերն էլ հուշեր դարձան...

Ձեր նախազգարող սուրբ քարերում,
Մայրն իր որդու աչքն է տեսնում,
Քույրն իր եղբոր կանչը լսում,
Իմ վեհակերտ հուշարձաններ:

Հուշարձաններ՝ հավերժ կանգուն,
Երկինքն էլ է ձեզ շափաղում,
Աշտուն երգեց ձեր փառքն անհուն
Իմ նորակերտ հուշարձաններ:

Մեծ հայրենականում հայ ժողովուրդը Նախեւառաջ կռվեց հանուն իր գոյության

Ճամաշխարհային պատմության մեջ շատ իրադարձություններ կան, որոնց պատմագիտական մեկնաբանությունները պայմանավորված են եղել որոշակի քաղաքական շարժառիթներով: Այս տեսակետից Երկրորդ համաշխարհային պատերազմը եւ նրա առանցքային մաս կազմող Հայրենական մեծ պատերազմը բացառություն չեն: «Սառը

պատերազմի»՝ Արեւմուտք-Արեւելք եւ այսօր էլ Արեւմուտք- Ռուսաստան հակադրությունների պայմաններում այս պատերազմի պատմությունը շարունակում է մեկնաբանվել որոշակի քաղաքական սկզբունքներով ու չափանիշներով՝ խեղաթյուրելով պատմական օբյեկտիվ իրականությունը: Անկախ տարաբնույթ մեկնաբանություններ-

րից՝ ֆաշիզմը որպես գաղափարախոսություն եւ որպես քաղաքական համակարգ, լուրջ սպառնալիք էր քաղաքակրթության համար ու այն կործանելը պատմական անհրաժեշտություն էր:

Հայ ժողովրդի համար Հայրենական մեծ

էջ 3

Հաղթանակ ապրելու, Նաեւ հաղթանակ զգալու ու հաղթանակ փոխելու օր

Սյունյաց աշխարհից ավելի քան երկու հազար հոգի անմիջական մասնակցություն ունեցան Արցախյան գոյակռվի մարտական գործողություններին:

Նրանցից հինգ հարյուրն իրենց կյանքը դրեցին հայրենիքի փրկության զոհասեղանին:

Հենց նրանց շնորհիվ էր նաեւ, որ Մեծ հաղթանակին միացավ մյուս հաղթանակը՝ Շուշիի հաղթանակը:



Արցախյան գոյամարտի նահատակների հիշատակը հավերժացնող հուշակոթող Գորիսում (2016թ.)



Շուշի-1992 թ., հայ մարտիկի ու նրա զենքի փառքը փայլապակեց առանձնահատուկ փառահեղությունը



Սենոր Զարթայան Արցախի Զանրապետության պաշտպանության բանակի խոսնակ, գնդապետ

...Փետրվարի 26-ին Արցախի ինքնապաշտպանական ուժերը ռազմական գործողություններ ծավալեցին միաժամանակ բոլոր ուղղություններից: Նույն օրն ազատագրվեց դեռևս 1990թ. հոկտեմբերի 17-ից արդրեջանական օմոնականների կողմից զավթված Ստեփանակերտի օդանավակայանը: Ապա, զարգացնելով առաջխաղացումը՝ հայկական ջոկատները կոտրեցին հակառակորդի դիմադրությունը ևսուջայու ռազմական հենակետում: Մարտական գործողությունների ընթացքում հակառակորդից ազգրավվեց երեք գրահամբռնա, երկու հրթիռանետ կայանք, մեկ թնդանոթ եւ զինամթերքի խոշոր պաշարներ, շուրջ հարյուր միավոր մարտական զենք:

1992թ. մարտի 10-ին Մոսկվայից ստացվեց հրաման Ստեփանակերտից 366-րդ մոտոհրաձգային գնդի դուրս բերման մասին: Դրանով Կրեմլն օրակարգից հանեց երբեմնի «միասնական հայրենիքի» հարավային սահմանագծում ապրող ժողովրդի պաշտպանության հարցը: Ամեն ինչ թողնվեց բախտի քմահաճույքին: Միակ հավատը սեփական ուժն էր, սեփական ձակատագրին տնօրինելու դժվարին, բայց եւ բաղձալի դավանանքը: Դեկավարվելով «ԼՂՀ Նախարարների խորհրդի

մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով եւ ելնելով հանրապետության տարածքում ստեղծված ռազմական բարդ իրադրությունից, նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանրապետության անվտանգության եւ պաշտպանության ապահովման նպատակով անհետաձգելի միջոցառումների մշակման եւ իրագործման համար, մինչեւ ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը, ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր 1992թ. մարտի 26-ին ստեղծվեց Պաշտպանության կոմիտե: Այն իր ողջ գործունեությունը պետք է կազմակերպեր ԼՂՀ Գերագույն խորհրդի եւ ԼՂՀ Նախարարների խորհրդի որոշումների ու կարգադրությունների հիման վրա:

Ռազմական գործում կառավարման պետական համակարգի ձեւավորումը, բնականաբար, խիստ դրական եւ արդյունավետ անդրադարձավ ԼՂՀ Պաշտպանության բանակի ձեւավորման եւ նրա զարգացման հետագա ընթացքի վրա: Մինչ այդ տարանջատ ֆիդայական-կամավորական ջոկատների գործունեության կենտրոնացումը ծավալվող պատերազմի ընթացքում դարձավ հաջողության երաշխիքներից մեկը:

ԼՂՀ Պաշտպանության կոմիտեի (հետագայում՝ ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտե) նախաձեռնությամբ եւ անմիջական ղեկավարությամբ, իրադրությանը համապատասխան, կյանքի կոչվեցին մի շարք հույժ կարեւոր եւ հրատապ միջոցառումներ: Կարճ ժամանակահատվածում կարգավորվեց ինքնապաշտպանական ջոկատների միավորման, նրանց նյութատեխնիկական բազայի համալրման, սպառազինության եւ ռազմական տեխնիկայի վերաբաշխման գործընթացը:

Խոջալուի ռազմական հենակետի վերացմամբ Ստեփանակերտի վրա տեղացող հրետանային «կարկուտը», այնուամենայնիվ, չմեղմացավ: Ջանհասան գյուղից մինչեւ

Քիրս ձգվող բոլոր արդրեջանական գյուղերը շարունակում էին համարվել թարմ ուժերով: Անմատչելի բերդաքաղաք Շուշին հակառակորդը վեր էր ածել ամենատարբեր զինատեսակներով հագեցված հզոր մի ամբողջ: Օրվա ընթացքում մի քանի անգամ այդտեղից հարյուրավոր արկեր էին թափվում ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ շրջակա մյուս բնակավայրերի վրա: Գործում էին համարյա բոլոր տեսակի հեռահար զենքերը:

1992թ. մայիսի 7-ին արդրեջանական հետեւակն ու զրահատեխնիկան, ինչպես նաեւ ՄԻ-24 մարտական երեք ուղղաթիռներ ուժեղ գրոհի ձեռնարկեցին Ստեփանակերտի հարավ-արեւմտյան հատվածի պաշտպանական դիրքերի վրա: Միաժամանակ, նույն օրվա ընթացքում Շուշիի եւ Ջանհասանի բարձունքներից մայրաքաղաքի վրա արձակվեցին «Գրադ» կայանքի մոտ 200 հրթիռ եւ մի քանի տասնյակ այլ տիպի արկեր: Զոհվեց երկու բնակիչ, իսկ չորս մարդ վիրավորվեց: Հրթիռակոծության հետեւանքով հրդեհ բռնկվեց երկաթուղային կայարանում եւ քաղաքի մի շարք բնակելի շենքերում:

ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը հարկադրված էր դիմել վճռական գործողությունների: Հայ ազատամարտիկները Ստեփանակերտի հարավ-արեւմտյան մատույցներում հաջողությամբ չեզոքացնելով հակառակորդի առաջխաղացումը, մայիսի 8-ի առավոտյան անցան հակահարձակման: ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի շտաբի հմուտ ղեկավարման, բոլոր աստիճանի հրամանատարների հստակ փոխգործակցության շնորհիվ դարբաղյան զորամիավորումներն առավոտյան ժամը 10-ին կտրեցին հակառակորդի դիմադրությունը Ջանհասանի եւ Քյոսալարի բարձունքներում՝ թշնամուց ազգրավելով մեկ «Գրադ» կայանք, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Շարքից հանվեց արդրեջանական

մի քանի միավոր զրահատեխնիկա: Նույն ժամանակ մարտական գործողություններ էին ընթանում նաեւ Շոշ գյուղի եւ Քիրս լեռան ուղղություններում՝ նպատակ ունենալով վերահսկողության տակ առնել Լաչինից Շուշի տանող մայրուղին:

Շուշիի մերձակա կրակակետերը ոչնչացնելուց հետո ահեղ մարտեր ծավալվեցին բուն քաղաք-ամրոցի համար: Հակառակորդն սկսեց ավելի կատաղի գործել քաղաքի շուկայի եւ բանտի հենակետերից: Միայն բանտի մերձակայքում արդրեջանցիները տեղադրել էին երեք «Գրադ» կայանք եւ վերածել ամուր բերդի: Սակայն թե՛ ամրակուռ պաշտպանական կառույցների առկայությունը, թե՛ Շուշիի գուտ աշխարհագրական առումով դժվարամատչելի տեղանքն անգոր եղան արգելք հանդիսանալ հայ ազատամարտիկների առաջխաղացմանը:

Մայիսի 8-ի կեսօրվա դրությամբ Շուշիի պաշտպանությունը ձեռքվեց հյուսիսից եւ արեւելքից: Ստեփանակերտի եւ Շոշ գյուղի ուղղություններից քաղաք մտած ազատամարտիկները կռիվներ էին մղում շուկայի շրջակայքում՝ քաղաքի կենտրոնական թաղամասերում: Ոչ պակաս դաժան մարտեր էին ընթանում նաեւ Շուշիի արեւելյան թաղամասում՝ բանտի մոտակայքում: Երեկոյան ժամը 18-ին հայ մարտիկները վերջնականապես տիրացան քաղաքի կենտրոնին՝ արդրեջանական զինայինների հսկողության տակ թողնելով միայն նրա հարավային հատվածը:

Քիրս լեռան ուղղությամբ գործող ինքնապաշտպանության ուժերի ջոկատներն իրենց հերթին արդյունավետ գործողությունների շնորհիվ կարողացան գրավել Լիսազոր գյուղի մոտակայքում գտնվող կարեւորագույն բարձունքներից մեկը եւ վերահսկողության տակ առնել Շուշի-Լաչին մայրուղին: Այս հանգամանքն արդրեջանցիների շարքերում խուճապի տեղիք տվեց: Արդրեջանական բանակի արդեն բարոյաքված զինվորները, ինչպես եւ սպասվում էր, դարձան անկառավարելի եւ, տարանջատվելով, սկսեցին անկազմակերպ նահանջել:

Ստեղծված իրավիճակում արդրեջանական բանակի հրամանատարությունը ձեռնամուխ եղավ հակամարտության գոտու ողջ երկայնքով մի շարք լայնածավալ ռազմական գործողությունների՝ նպատակ ունենալով հնարավորության սահմանում դարբաղյան ուժերի ուղղությունը շեղել Շուշի-Լաչին ռազմական կապից հատվածում: Մայիսի 8-ին՝ ժամը 15.00-ի դրությամբ, արդրեջանական ուղղաթիռները, ներխուժելով հանրապետության օդային տարածք, գնդակոծության ենթարկեցին Մարտունու շրջանի Ավրուռ, Մյուրիշեն, Նորշեն եւ Ասկերանի շրջանի Շոշ եւ Քաասնի գյուղերը: Միաժամանակ Նորշեն գյուղից դեպի Աղբաղի շրջանի Գյուլափի բնակավայրն ընկած տարածքում հայ ազատամարտիկներն անհավասար մարտի մեջ մտնելով գրահատեխնիկայով զինված արդրեջանական կազմավորումների հետ, հակառակորդին ստիպեցին ձեռնպահ մնալ հետագա հարձակողական գործողությունները զարգացնելու մտադրությունից եւ նահանջել ելման դիրքեր՝ մարտադաշտում թողնելով 9 սպանված եւ 1 միավոր զրահատեխնիկա:

Նույն օրը ժամը 18.00-ին Հարդութի շրջանի Տոլ գյուղի ուղղությամբ Արդրեջանի զինված կազմավորումների կողմից կատարված ձեռքման բոլոր փորձերը նույնպես ավարտվեցին անարդյունք: Արցախ տանող երկաթե դարբասների անառիկությունն այդ օրերին փաստվեց: Յուրաքանչյուր քայլ կա-

տարվում էր լրիվ մշակված ու կանխամտածված ձեւով:

Մայիսի 8-ի ուշ երեկոյան Շուշիի երկնակամարն աստիճանաբար խաղաղվեց: Միայն երկար ընդհատումներով քաղաքի տարբեր ծայրերից լսելի էին ավտոմատային կրակահերթեր: Հայոց Արցախ աշխարհի հինավուրց մայր քաղաքը, որ տասնամյակներ շարունակ արդրեջանցիների կողմից հանիրավի թմբկահարվում էր որպես «մուսուլմանական գահահախտ», վերջապես գտավ իր իսկական տիրոջը: Մայիսի 9-ին Շուշին լրիվությամբ ազատագրված էր: Հայ մարտիկի զենքի փառքը վերստին փայլատակեց իրեն առաձնահատուկ փառահեղությամբ: Իր 273-ամյա պատմության ընթացքում, Շուշիի բերդ-ամրոցը, որը միշտ էլ հայտնի է եղել իր անառիկությամբ, առաջին անգամ անձնատուր եղավ հանուն պատմական արդարության, հանուն տիրոջ սիրո: Երկու օր տեսած մարտական այդ փայլուն ռազմագործողության ընթացքում ակնհայտ դարձավ հայրենիքին ծառայելու կոչված մարդկային արժանապատվության անվիճելի իրողությունը, որը ցայտուն կերպով դրսեւորվեց ինքնապաշտպանության ուժերի 1-ին, 4-րդ, 6-րդ, Ակնաղբյուրի, Բալուջայի վաշտերի, հետախույզների եւ մյուս ստորաբաժանումների սխրագործություններում:

Վերացնելով հանրապետության տարածքում տեղակայված թշնամական կրակակետերը եւ ազատագրելով Շուշի քաղաքը, դարբաղյան ուժերի առջեւ խնդիր դրվեց կարճ ժամանակահատվածում իրականացնել ինչպես օպերատիվ-ռազմավարական նշանակության խնդիրներ, այնպես էլ կենսական ամենահույժ կարեւորության Շուշի-Լաչին-Ջաբրիլ ճանապարհի բացման մարտական առաջադրանքը, որը հնարավորություն կտար ձեռքել Արցախը շրջափակող օդակայան եւ ապահովել երկրամասի նորմալ կենսագործունեությունը:

Մայիսի առաջին կեսերին ինքնապաշտպանության ուժերի ստորաբաժանումներին հաջողվեց արդրեջանցիներին դուրս մղել Իսաբուլաղ, Ջարիպուր, Լիսազոր՝ ռազմական հենակետերի վերածված գյուղերից: Ապա, զարգացնելով առաջխաղացումը, մայիսի 17-ին՝ արդրեջանական օմոնի կողմից Բերդաձորի ենթաշրջանի բնակավայրերը հայաթափելուց ուղիղ մեկ տարի անց, ազատագրեցին Շարկաձոր, Կանաչ թալա, Մեծ շեն, Հին շեն եւ Եղծահող գյուղերը՝ դրանով իսկ լիակատար ու վերջնական հսկողություն հաստատելով ամբողջ Շուշիի շրջանի վրա: Մայիսի 18-ին Արցախի ինքնապաշտպանությունը մտան Քաշաթաղ-Լաչին, ապա դուրս եկան Հայաստանի Զանրապետության պետական սահմանը: Շուրջ երեք տարի պահանջվեց շրջափակման մահաբեր օդակայանի ուժով պատռելու համար: Խորհրդային իշխանության օրոք արհեստականորեն տարանջատված Լեռնային Ղարաբաղ նորաբաց միջանցքով վերստին միաձուլվելով Հայաստանի հետ, դարձավ մայր ամբողջության բաղկացուցիչ մաս: Տասն օրում կատարված ռազմական հարթաքաղաք դարձավ պատմական իրադարձություն՝ իմաստավորելով հանուն հայրենյաց նահատակված զինվորների անձնագրությունը: Հանձնես արցախահայության անօրինակ անձնվիրության, ողջ հայ ժողովրդի մեջ վերստին վերընձույզվեց զենքի ուժի հանդեպ կորսված հավատը, հաղթահարվեց դարբեր ի վեր սովերի պես նրան հետապնդող դատապարտվածություն ուրվակա-

Մեծ հայրենականում հայ ժողովուրդը նախեւառաջ կռվեց հանուն իր գոյության



ԳՐԻՇԱ ՉԱԽՐՅԱՆ

Եւ պատերազմը եւ այդ պատերազմում տարած հաղթանակը պատմական առանցքային նշանակություն ունեն, քանզի նորից կանգնեց ֆիզիկական գոյության հարցականի առջև: Դեռեւս 1939 թ. օգոստոսի 22-ին Օբերգայցբուրգում Երրորդ ռայխի Գերագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ Ադոլֆ Հիտլերը գորահրամանատարներին հորդորում էր ոչնչացնել սլավոնական ժողովուրդներին՝ առանց հաշվի առնելու հասարակական կարծիքը: «Հիմա, մեր ժամանակներում, ո՞վ է հիշում 1915 թվականին միլիոնավոր հայերի ոչնչացումը Թուրքիայում», - իր հրեշավոր ծրագիրը հիմնավորելու համար հայտարարում է Հիտլերը:

Պատերազմի հենց սկզբնական փուլում հայ ժողովուրդը գիտակցեց իր գլխին կախված վտանգը եւ ուղի կանգնեց գոյությունը պաշտպանելու համար: ԽՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակումը Թուրքիան դիտում էր որպես պատմական նպաստավոր պահ՝ պանթուրքիստական երազանքների իրականացման համար: Պատահական չէ, որ Գերմանիայի հարձակումից անմիջապես հետո Թուրքիան խորհրդային Հայաստանի սահմաններին կենտրոնացրեց ավելի քան 26 դիվիզիա, եւ սպասում էր նպաստավոր պահի՝ ռազմական գործողություններ սկսելու համար: Թուրքիայում այդ ժամանակ աննախադեպ կերպով ակտիվացան պանթուրքիզմի գաղափարախոսությունը դավանող կազմակերպությունները, իսկ տպագրված քաղաքական քարտեզներում այլեւ Հայաստանը չէր նշվում: Իրադարձությունների հակառակ ընթացքի դեպքում դժվար չէ պատկերացնել այս ամենի հետեւանքները հայ ժողովրդի համար: Հայ ժողովրդի մեջ չսպիացած վերքի պես ապրում էր Գերմանիայի դաշնակից Թուրքիայի կողմից Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրականացրած մեկ ու կես միլիոն հայերի եղեռնը: Նորից նույն դաշնակիցները՝ նույն հակամարտության, հրեշավոր ծրագրերով: Ստեղծված իրավիճակում, անկախ դրոշի գույնից ու գաղափարախոսությունից, հայ ժողովուրդն ամենից առաջ կռվեց հանուն իր գոյության: Պատահական չէ, որ ԽՍՀՄ-ի վրա հարձակումից անմիջապես հետո հայ ժողովուրդը՝ հայրենիքում, թե սփյուռքում, ուղքի կանգնեց ֆաշիզմի դեմ պայքարելու համար: Խորհրդային ժողովուրդների մեջ, թե՛ հաշվի առնենք բնակչու-

թյան թիվը, Խորհրդային Հայաստանը եզակի է պատերազմին մասնակցության բոլոր ցուցանիշներով: Պատերազմի սկսվելու պահին Խորհրդային բանակի կազմում ծառայում էր 60 հազար հայ: Հետագայում, համընդհանուր զորակոչի արդյունքում, այդ թիվը հասավ 500 հազարի: 300 հազարը զորակոչվեց Խորհրդային Հայաստանից (փաստացի յուրաքանչյուր 5-րդ բնակիչ մեկնեց ռազմաճակատ), իսկ 200 հազարը՝ Խորհրդային Միության մյուս հանրապետություններից: Իսկ սփյուռքում ավելի քան 100 հազար հայ համալրեց հակահիտլերյան դաշինքի երկրների բանակը: Միայն ամերիկյան ու ֆրանսիական ստորաբաժանումների կազմում, տարբեր ռազմաճակատներում, մարտնչում էր 20 հազարից ավելի հայ:

Հայ ժողովրդի կորուստներն այս պատերազմում հասավ 200 հազարի:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է վեց հայկական դիվիզիա, որից հինգը ձեւավորվել է պատերազմը սկսվելուց հետո:

76-րդ հրաձգային դիվիզիան (հետագայում՝ 51-րդ գվարդիական) ձեւավորվել էր Երեւանում, 1922 թվականին: Այդ դիվիզիայի կազմում են ծառայել ապագա մարշալներ Յ. Բաղդամյանը, Յ. Բաբաջանյանը եւ բազմաթիվ նշանավոր հայ զորապետներ: Պատերազմի սկզբնական փուլում դիվիզիան ռազմավարական խնդիր էր իրականացնում Իրանի տարածքում, այնուհետեւ տեղափոխվեց Ստալինգրադ ու մարտերով հասավ մինչեւ Մերձբայթիկա եւ Բելոռուսիա:

Փառավոր մարտական ուղի անցավ 89-րդ Թամանյան դիվիզիան, որը ձեւավորվել էր Երեւանում 1941 թվականի դեկտեմբերին:

Ավելի քան 60 հայազգի գեներալներ ռազմաճակատների կազմում գլխավորում էին տարբեր ստորաբաժանումներ, այդ թվում՝ երեքը բանակի եւ երեքը կորպուսի հրամանատարներ: Պատերազմի ավարտից հետո հայ ժողովրդի զավակներից 83 սպա արժանացավ գեներալի, իսկ Սերգեյ Ազանովը (Սերգեյ Օհանյան)՝ ինժեներական զորքերի մարշալի աստիճանի:

Այն մարտերի մեջ մտավ Կովկասի նախալեռներում: Դիվիզիան մասնակցեց Կերչի, Սեաստոպոլի ազատագրմանը, իսկ Թաման թերակղզու համար մղված մարտերում ցուցաբերած հերոսության համար դիվիզիային տրվեց «Թամանյան» անունը: Գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ դիվիզիան առաջին ստորաբաժանումներից էր, որ հատեց ԽՍՀՄ պետական սահմանը եւ Լեհաստանի վրայով 1945 թվականի գարնանը հասավ Բեռլին:

1941 թվականի սեպտեմբերին ձեւավորվեց 390-րդ հայկական հրաձգային դիվիզիան, որը մասնակցեց Կերչի համար մղվող թե՛ մարտերին:

Նույն թվականի օգոստոսին ձեւավորվեց 408-րդ հրաձգային դիվիզիան, որը մարտերի մեջ մտավ Նովոռոսիյսկի եւ Տուապսեի շրջանում ու հաղթանակը դիմավորեց Էլբայի ափերին: Օգոստոսին ձեւավորվեց նաեւ

409-րդ հրաձգային դիվիզիան, որը մինչեւ 1942 թվականի դեկտեմբերը պաշտպանում էր Խորհրդային Հայաստանի ուղղությամբ պետական սահմանը՝ Թուրքիայի հավանական հարձակումը չեզոքացնելու համար: Այնուհետեւ դիվիզիան մարտերի մեջ մտավ Հյուսիսային Կովկասում ու մասնակցեց Հունգարիայի, Սլովակիայի եւ Ավստրիայի ազատագրմանը:

261-րդ հայկական հրաձգային դիվիզիան ձեւավորվել է 1942 թվականի աշնանը եւ պաշտպանում էր հայ-թուրքական սահմանը:

Բացի ազգային վեց դիվիզիայից՝ Հայաստանի տարածքում ձեւավորվել է համալրվել է ութ այլ դիվիզիա:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանում մարտական պատրաստություն են անցել ավելի քան 85 հազար նորակոչիկ ԽՍՀՄ տարբեր շրջաններից:

Հայրենական մեծ պատերազմի տարբեր ռազմաճակատներում հայ ժողովրդի զավակներն աչքի ընկան թե՛ որպես զորահրամանատարներ, եւ թե՛ որպես շարքային զինվորներ: Մասնակցելով պատերազմի բոլոր խոշորագույն ճակատամարտերին՝ նրանք, հավատարիմ հայրց մարտական ոգուն, բարձր պահեցին մեր ժողովրդի պատիվն ու արժանապատվությունը: Հազարավոր հայեր մասնակցեցին Մոսկվայի պաշտպանությանը, իսկ ապագա մարշալ Յ. Բաղդամյանն այդ ծանր օրերին գլխավորում էր Յարավարեմտյան ռազմաճակատի աջ թեւում մարտնչող ռազմաճակատային օպերատիվ հարվածային խմբավորման շտաբը: Ավելի քան 30 հազար հայ մասնակցեց Ստալինգրադի ճակատամարտին, 10 հազարը՝ Կուրսկի ճակատամարտին: Կուրսկում եւս իրենց հրամանատար-



Մայր Հայաստան հուշահամալիրը Երեւանում (1967թ., քանդակագործ՝ Արա Չարությունյան)

Տարբեր ռազմաճակատներում ցուցաբերած խիզախության համար 66802 հայ պարգևատրվեց պետական տարբեր աստիճանի շքանշաններով ու մեդալներով, այդ թվում՝ 106 հոգի Խորհրդային Միության հերոսի կոչման, որոնցից երկուսը՝ Հովհաննես Բաղդամյանը եւ Նելսոն Ստեփանյանը՝ կրկնակի, իսկ 26 հոգի՝ «Փառքի շքանշանի» երեք աստիճանների ասպետի կոչման: Նշենք, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1967 թվականի հրամանագրով «Փառքի շքանշանի» լրիվ ասպետների արտոնությունները հավասարվեցին Խորհրդային Միության հերոսի համար սահմանված արտոնություններին: Հերոսների թվով ԽՍՀՄ-ում հայերը վեցերորդն են, իսկ թե՛ հաշվի ենք առնում բնակչության թիվը՝ առաջինը:

Հայ ժողովրդի զավակներն աչքի ընկան ոչ միայն գործող բանակի կազմում, այլ նաեւ Խորհրդային Միությունում ու Եվրոպայի երկրներում պարտիզանական եւ դիմադրական շարժումների ընթացքում:

Առանձնահատուկ ներդրում ունեցան հայ հետախույզները: Հետախույզության պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Գեորգ Կարդանյանը, ով 1943 թվականին բացահայտեց Թեհրանի համաժողովի ընթացքում երեք պետության առաջնորդներին վերացնելու ֆաշիստների պլանը, իսկ այդ ամբողջ գործողությունը ղեկավարում էր խորհրդային հետախույզության լիազոր Իվան Ադայանցը:

Ճակատայիններից ոչ պակաս մարտնչում էր նաեւ աշխատանքային թիկունքը՝ ռազմաճակատի կարիքները բավարարելու համար: Պատերազմի տարիներին Հայաստանում շահագործման հանձնվեց 30 նոր ձեռնարկություն, ավելի քան 110 արտադրամաս ու արհեստանոց, որոնք թողարկում էին ռազմաճակատի համար անհրաժեշտ 300 տեսակի արտադրանք, այդ թվում՝ սպառազինություն, պայթուցիկներ, ականանետային արկեր, կապի

միջոցներ եւ այլն: Հաղթահարելով անասելի դժվարություններ՝ հայ աշխատավորությունը կարողացավ պատվով կատարել իր առջեւ դրված խնդիրը եւ հասնել հաղթանակի:

Պատերազմի արհավիրքները չշրջանցեցին նաեւ Սյունիքը: Մեր լեռնաշխարհի զավակները, հավատարիմ պատմական մարտական ավանդույթներին, խորհրդային բանակի տարբեր ստորաբաժանումների կազմում բարձր պահեցին մեր ժողովրդի մարտական պատիվը:

Այսպես, Սյունիքից 1941-1945 թվականների ընթացքում զորակոչվեց 22.946 մարդ, որոնցից զոհվել են 10.690-ը: Ավելի քան 10 հազար սյունիցի պարգևատրվեց տարբեր աստիճանի մեդալներով ու շքանշաններով: Սյունիքի 11 զավակ արժանացավ Խորհրդային Միության՝ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, իսկ սյունիցի Հունան Ավետիսյանի անօրինակ սխարնքն առանձնահատուկ է մարտական կենսագրությունների տարեգրության մեջ: Ինը սյունիցի գեներալ պատերազմի ընթացքում գլխավորում էր խորհրդային բանակի տարբեր ստորաբաժանումներ, այդ թվում՝ բանակներ, կորպուսներ, բրիգադներ ու դիվիզիաներ:

Բազմաթիվ սյունիցիներ աչքի ընկան պարտիզանական, ընդհատակայ եւ դիմադրական շարժումների ընթացքում՝ թե՛ Խորհրդային Միությունում, եւ թե՛ Եվրոպայի երկրներում:

Հայրենական մեծ պատերազմը ծանր փորձություն էր մեր ժողովրդի համար, ինչը մեր ժողովուրդը, խորհրդային պետության մյուս ժողովուրդների հետ միասին, հաղթահարեց ծանր զրկանքներով ու գերմարդկային ճիգերով:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի համար մարտնչած ու զոհված խորհրդային պետության մյուս ժողովուրդների հիշատակի առջեւ խոնարհվեց նույն ականածանքով, ինչպես խոնարհվում ենք մեր ազգային պատմությունից հայտնի մյուս հերոսների հիշատակի առջեւ: ■

Պատերազմի փարիներին գրվեց Սիսիանի պապմուլթյան հերոսական եւ երբեք չխամրող էջերից մեկը



ՇԵՆՅԱ ԱՊԱԲԵԿՅԱՆ

Ժամանակին առիթներ շատ են ունեցել հանդիպելու եւ գրուցելու Հայրենական մեծ պատերազմի սիսիանցի վետերանների հետ: Հենց պատերազմի սկզբից հաղթանակի նկատմամբ հավատն այնքան մեծ է եղել, որ նրանց թվացել է, թե այն մի կարծ ժամանակաշրջանի խնդիր է, եւ որ շատ արագ ագրեսորը կջախջախվի ու կշարժվի երկրի սահմաններից դուրս: Ոչ ոք անգամ չի էլ մտածել, թե այն կվերածվի մի անողորմ սպանդի եւ կշարունակվի չորս երկար ու ծիգ տարիներ: Պատերազմի հենց հաջորդ օրը՝ հունիսի 23-ին, Սիսիանի բոլոր բնակավայրերում տեղի ունեցան բազմամարդ միտինգներ: Ըստ շրջանային թերթի՝ այդ միտինգներում թեաժում էին երկու հիմնական լոզունգ՝ «Մենք միշտ պատ-



րաստ ենք պաշտպանելու մեր սրբազան հողը» ու «Գազազած Հիտլերը եւ նրա կիկը այս պատերազմում կջախջախվեն՝ զարնվելով մեր կարմիր բանակի պողպատե զրահներին»:

5493 սիսիանցի, ըստ որում՝ 28-ը՝ կանայք: Այս թվերի մեջ մտնում են նաեւ այն սիսիանցիները, ովքեր ձակատ են մեկնել հորհրդային Միության այլ բնակավայրերից: Շատ ընտանիքներ ռազմածակատ ծամփեցին տան բոլոր տղամարդկանց: Սիսիանից ձակատ մեկնեցին Ամիրջան Գասպարյանի 5, Շաղատից՝ Սկրտիչ Ստեփանյանի 4, Բունիսից՝ Համբարձում Լեւոնիսյանի 4 որդիները:

Սիսիանցիները կռվել են տարբեր ձակատներում: Դեռ պատերազմի առաջին օրերին իրենց փառքով պսակեցին դիվիզիայի հրամանատարներ, գնդապետներ աշտուականի Անդրանիկ եւ Աշոտ Սարգսյան եղբայրները: Անդրանիկը դեռ 1941 թվականի հուլիսի 25-ին պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: Աշոտ Սարգսյանն ավարտել էր Լազարյան ծեմարանը, Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան:

Նրա ռազմական տաղանդը ժամանակին բարձր է գնահատվել Ալեքսանդր Մյասնիկյանի եւ նրա ընկեր ու զինակից Յուզիանի կողմից: Պատերազմի առաջին օրերին նրա դիվիզիան մարտնչել է Լվովի մատուցներում եւ ապահովել շրջապատման մեջ ընկած խորհրդային զորամասերի կանոնավոր նահանջը: Հուլիսին նա զոհվել է Վիննիցայի տակ մղված մարտերում: Նրա դին Հովհաննես Բաղդասարյանի նախաձեռնությամբ փոխադրվել է Կիև եւ թաղվել զինվորական հոսպիտալի բակում: Պարգևատրվել է «Կարմիր դրոշի» 2,

«Կարմիր աստղի» շքանշաններով: Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղդասարյանի առաջարկությամբ նրա ծննդավայր Աղբեր գյուղը վերանվանվել է նրա անվամբ՝ Աշոտական:

Նույնպես աչքի ընկնող սիրանքներ են գործել նաեւ սիսիանցիները: Նրանք շատ լավ էին գիտակցում, որ կռվելով Ստալինգրադի համար՝ կռվում են նաեւ իրենց հայրենիքի համար: Հատկանշական է, որ նշանավոր «Պավլովի տան» քաղղեկը եղել է բռնակոթցի Վաչե Հովակիմյանը: Նա հարազատներին Ստալինգրադից ուղարկած նամակներից մեկում գրել է. «...Մենք անխնայ ոչնչացնում ենք թշամիներին: Մոտենում է նոր տարին: Խմեցեք մեր հայրենիքի պաշտպանների, հաղթանակի կենսաը: Հաղթանակը մերն է»:

Պահեստի սպա Անտոն Դրագունովը նրա մասին գրել է. «Մարտական հրամանատար Ավակիմովը պահանջկոտ էր, համարձակ ու անվեհեր: Եղել է պահ, երբ հենակետը պաշտպանել է մեկ մարդ՝ Վաչեն: Չանգահարում են, հարցնում.

- Քանի հոգի եք:
- Երեք: Ես, հեռախոսը, գնդադիրը, - պատասխանել է նա»:

Դեռ 1935 թ. ավարտում է Մոսկվայի ռազմական-օդային ակադեմիան: Հայրենական մեծ պատերազմի օրերին Ավետիս Դանիելյանը ղեկավարել է կործանիչ ավիացիայի տարբեր զորամասեր, իր համարձակ գործերով զգալի կորուստներ պատճառել թշամուն:

Սիսիանցիներն աչքի են ընկել նաեւ շատ այլ ձակատներում: Բռնակոթցի մայր Անդրանիկ Գրիգորյանի մարտական ընկեր կապիտան Վանիկը նրա մասին ձակատային թերթերից մեկում

Մեղրեցիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին



ԼԱԻԼԻՏԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

1941թ. հունիսին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: ԽՍՀՄ-ի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակումը ժամանակավորապես խախտեց խորհրդային ժողովրդի խաղաղ աշխարհը:

Պատերազմի առաջին օրերին հայրուրավոր երիտասարդներ ռազմածակատ մեկնեցին հայրենիքի

ազատությունն ու անկախությունը պաշտպանելու համար: Պատերազմի ընթացքում Մեղրու շրջանից մոտ 1900 մարդ է զորակոչվել բանակ, որից 800 հոգի զոհվեց տարբեր ռազմածակատներում: Դեռ այսօր էլ հիշում են հրամանատարներ Բագրատ Դանիելյանի, Սոկրատ Մարկոսյանի, Հարություն Թումանյանի, Սկրտիչ Փեցյանի, Գուրգեն Պողոսյանի անունները, ովքեր հրամանատարելով առանձին զորամասեր, մարտադաշտում ցուցաբերեցին բազմաթիվ քաջագործություններ:

Հայրենիքին անգնահատելի ծառայություններ մատուցեց ինժեներատեխնիկական ծառայությունների գեներալ-մայոր Տիգրան Մելքոնյանը: 1932թվականին ավարտելով Մոսկվայի ժուկովսկու անվան ռազմաօդային ակադեմիան, իր ողջ կյանքը կապեց ավիաշինարարության հետ: Տիգրան Մելքոնյանը 1940 թվականին պաշտպանում է դոկտորական դիսերտացիա եւ ստանում տեխնիկական գիտությունների դոկտորի աստիճան: Ավելի քան տաս տարի ղեկավարում է գիտահետազոտական ինստիտուտը եւ ավիացիայի

գործարաններից մեկը՝ որպես գլխավոր կոնստրուկտոր: Մելքոնյանը գիտական խոշոր ներդրումներ է կատարել հայրենական ավիացիայի զարգացման գործում: Հայրենական մեծ պատերազմի ահեղ օրերին, թողնելով ակադեմիայի դասախոսական ամբիոնը, նա մեկնում է ռազմածակատ եւ խիզախորեն մարտնչում ֆաշիստական զավթիչների դեմ: Ծառայելով կործանիչ ավիացիոն դիվիզիաներից մեկում՝ մեծ կորուստներ է պատճառել թշամուն կենդանի ուժին եւ զրահատեխնիկային: Մելքոնյանը մտնում է գործող բանակում մինչեւ պատերազմի հաղթական ավարտը: Պատերազմից հետո նորից նշանակվում է ռազմաօդային ակադեմիայի ամբիոնի վարիչ եւ միաժամանակ ավիացիոն մոտորաշինության կենտրոնական ինստիտուտի պետ:

Մոտորաշինության ասպարեզում գիտական նոր հայտնագործման համար 1949 թ. Մելքոնյանին շնորհվում է պետական մրցանակ, հայրենիքին ծառայելու համար Սովետական Միության վեց շքանշան: Հայրենական մեծ պատերազմի տարիներին աչքի ընկնող ծառա-

յություններ մատուցեց ավիացիայի ինժեներ-գնդապետ Ավետիս Դանիելյանը:

Նա 1935 թ. ավարտում է Մոսկվայի ռազմական-օդային ակադեմիան: Հայրենական մեծ պատերազմի օրերին Ավետիս Դանիելյանը ղեկավարել է կործանիչ ավիացիայի տարբեր զորամասեր, իր համարձակ գործերով զգալի կորուստներ պատճառել թշամուն:

Խիզախության եւ հմուտ ղեկավարության շնորհիվ հրամանատարությունը նրան նշանակել է կործանիչ ավիացիայի կորպուսի հրամանատար: Այդ պոստում նա ցուցաբերել է կազմակերպչական մեծ ունակություններ եւ խիզախության փայլուն օրինակներ: Գնդապետ Ավետիս Դանիելյանն աչքի ընկնող ծառայությունների համար պարգևատրվել է շքանշաններով եւ մեդալներով:

Առանձին ընտանիքներ ռազմածակատ են ծանապարհել ընտանիքի բոլոր երիտասարդներին: Օրինակ, Կարծեան գյուղի բնակիչ Գրիգոր Մարկոսյանն իր հինգ որդուն՝ Անդրանիկին, Մինասին, Սկրտչին, Ջավենին եւ Օսիկին, որոնցից չորսը հերոսի մահով ընկան ռազմի դաշտում, ռազմածակատից վերադարձավ միայն մեկը՝ Մինասը:

1942 թվականին գերմանաֆաշիստական զորքերը մոտեցան Կովկասյան գլխավոր լեռնաշղթային: Վաշտի կուսակազմակերպիչ Մինաս Մարկոսյանը ռազմական դժվարին եւ պատասխանատու

հանձնարարություն ստացավ: Նա իր ջոկատով պետք է կտրեր թշամուն առաջխաղացումը՝ Մարոնի սառցակալած լեռնանցը: Չորս օրվա ընթացքում նա հաղթահարեց դժվարանցանելի ճանապարհը եւ հասավ Մարոնի լեռնանցքին: Վաղ առավոտյան թշամին շրջապատեց հոգնած ջոկատին: Գնահատելով ստեղծված ծանր իրավիճակը, Մարկոսյանն ընդունեց անհավասար մարտը: Ջոկատը, որը բաղկացած էր հինգ հոգուց, թույլ չտվեց թշամուն հիսուն ավտոմատակորների ոչ մի քայլ առաջ շարժվել եւ հերոսական դիմադրություն ցույց տվեց: Գերմանական «Էռեյվայս» դիվիզիայի օպերացիան խափանվեց Մարկոսյանի խիզախ ջոկատի ջանքերով:

Որբերգական ծանր ապրումներ ունեցավ Տաշտուն գյուղի բնակիչ Դավիթ Հովհաննիսյանը: Նրա հինգ որդին՝ Սուրենը, Գուրգենը, Սկրտիչը, Հովհաննիսյանը մարտնչեցին տարբեր ռազմածակատներում եւ հերոսի մահով բոլորն էլ զոհվեցին: Տաշտունում դեռ հիշում են վայելչակամ, պարթեասիական, արժվային հայացքով Գուրգեն Մաքսեյանին: Նա պատերազմի առաջին օրը հրաժեշտ տվեց Օխչիի միջնակարգ դպրոցի կուլեկտիվին, որի տնօրենն էր, եւ մեկնեց ռազմածակատ: Ընդունակ, ձեռներեց եւ քաջատրուկ երիտասարդը պատերազմի բոլոր մեկ ու կես տարվա ընթացքում հասավ տանկային զորքերի կապիտանի աստիճանին: Սեաստոպոլ քաղաքի ազատագրման համար մղվող

Հարժիս գյուղը Մեծ հայրենականում. երեք զինվորականի դիմանկար



Ե լունյաց աշխարհի ամեն մի գյուղ իր լավագույն զավակներին ուղարկեց Մեծ հայրենականի ծակատներ: Ընդհանուր առմամբ 22946 սյունեցի մեկնեցին ծակատ: Նրանցից 10690-ը մահացան մարտական գործողությունների ընթացքում կամ անհայտ կորան: 11 հոգու շնորհիվեց Խորհրդային Միության հերոսի կոչում, մեկին՝ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման արժանացավ Համո Սերգեյի Յոլյանը՝ Գորիս քաղաքից, ինժեներահրետանային ծառայության գեներալ-մայոր, ԽՍՀՄ պետական մրցանակի քառակի դափնեկիր:

Երկրամասի բոլոր բնակավայրերին հանգույն Հարժիսը եւս հայտնվեց ժամանակի ջրապտույտի մեջ: Գյուղի տղամարդկանց հիմնական մասը՝ մոտ 200 հոգի, մեկնեց ռազմաճակատ: Նրանցից 99 հոգի (ըստ մեկ այլ աղբյուրի՝ 106) այլեւ չվերադարձվեց, որոնց հիշատակը հավերժացնելու համար գյուղի մուտքում 1966 թվականին կանգնեցվեց հուշարձան:

Գյուղն իր զավակներին պատերազմ էր ճանապարհում բնակավայրից Գորիս ձգվող ճանապարհի եզրին կանգնեցված հուշարձանի մոտակայքից: Ուշագրավ պատմություն ունի այդ հուշարձանը:

Գյուղում ծանաչված հյուան եւ սայլագործ վարպետի՝ Հակոբ Մարդյանի որդին՝ Խաչատուրը (Ներսեսը), 1939-ին զոհվել էր Ֆիննական պատերազմում: Հայրն էլ որդու հիշատակը հավերժացնելու համար հուշարձան էր կանգնեցրել այն վայրում, որտեղից որդուն ծակատ էր ճանապարհել: Այդ հուշարձանը մինչեւ հիմա էլ կանգուն է: Ամբողջ Հայաստանում բացառիկ այդ հուշարձանի վրա հետեւյալ գրառումն է. «Արձան Խաչատուր (Ներսես) Հակոբի Ներսիսյանի (ծնված 1916 թ.), զոհված 1939 թ. (հոր եւ որդու վերջին հրաժեշտի վայրում սույն արձանը կանգնեցված է հոր եւ եղբոր կողմից): Հուշվեց ղեկտնմբերի 7-ի սպիտակ փինների դեմ մղված հերոսական մարտերում»:

Հետագայում, սակայն, Հակոբ Մարդյանի մյուս որդին եւ՝ Լազր անունով, մահացավ մարտական գործողությունների ընթացքում՝ Մեծ հայրենականում՝ մնալով անշիրիմ:

Մեծ հայրենականի արհավիրքները Հարժիսը տեսավ նաեւ այլ կերպ: Գյուղը բախվեց մի իրողության, որ մինչեւ հիմա էլ առեղծված է: 1941 թ. օգոստոսին Թուրքիայից Հայաստանի տարածք ներխուժած մի ինքնաթիռ (թուրքական կամ գերմանական) ռմբակոծեց գյուղը: Յոթ ռումբ ընկավ գյուղի վրա՝ Իրիցած թափայի հարավային լանջից մինչեւ ներկայիս ֆուտբոլի դաշտ ընկած տարածք. ռմբակոծության հետքերը 1970-ականներին դեռ

պահպանվում էին: Չհեր չեղան, վիրավորվեց մեկ երեխա:

Իսկ գյուղացիները, չհասկանալով, թե ինչ է կատարվում, շատ արագ պատսպարվեցին խաչին տակի քարատակներում. հնձվորը հանդը թողեց, կալվորը՝ կալը, անասնապահները՝ ոչխարի հոտերն ու կովերի նախիրները: Միայն օրվա վերջին գյուղը դուրս եկավ խուճապային վիճակից:

Ինչպես արդեն նշեցինք, Հարժիսից մոտ 200 հոգի մեկնեց Մեծ հայրենականի ռազմաճակատներ: Նրանցից գրեթե ոչ մեկի մարտական ուղուն, ցավոք, անդրադարձ չի կատարվել: Անշուշտ, յուրաքանչյուրի մասին խոսք ասելու պարտք ունենք: Բայց քանի որ հնարավոր չէ բոլորի մասին միանգամից (մեկ հրապարակման մեջ) խոսք ասել, նպատակահարմար գտանք այսօր՝ Մեծ հաղթանակի 75-րդ տարեդարձի առիթով համառոտ անդրադառնալ հարժիսից զինվորներից երեքի մարտական ուղուն՝ Մանուց Բեգլարի Գրիգորյան, Գարեգին Ծերունի Դավթյան եւ Լազր Ավանեսի Ալեքսանյան:

Ավագ լեյտենանտ Մանուց Բեգլարի Գրիգորյանի մարտական ուղուն ծանոթացանք իր իսկ հուշատետրից քաղվածքներ կատարելով, որ «Սյունյաց երկիր» խմբագրությանը տրամադրեց նրա որդին՝ Մանվել Գրիգորյանը: Հուշատետրը գրված է հեղինակի ձեռնամբ՝ ընթերցելի ձեռագրով:

Ստորեւ՝ հատվածներ Մանուց Գրիգորյանի հուշերից:

... Ծնվել եմ Գորիսի շրջանի Յայջի գյուղում 1922 թ. մայիսի 5-ին: 1930 թ. ընդունվել եմ գյուղի յոթնամյա դպրոցը, ավարտել 1939-ին՝ գերագանց գնահատականներով, եւ առանց քննությունների ընդունվել Գորիսի մանկավարժական ուսումնարան: Երկրորդ կուրսն ավարտել էի, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Եվ հնարավոր չէր այլեւս շարունակել կրթությունն ուսումնարանի ավարտական՝ 3-րդ կուրսում:

1941 թ. օգոստոսի 17-ին զորակոչվել եմ սովետական բանակ: 1942 թ. մարտի 10-ին ավարտել եմ Թելավի ռազմական հետեւակային ուսումնարանը՝ ստանալով լեյտենանտի կոչում: Երկու օր անց ինձ ուղարկել են Ստալինգրադի ռազմական օկրուգի տրամադրության տակ՝ ծառայելու դասակի հրամանատար: Նույն տարվա ապրիլի 1-ին ինձ կրկին գործուղել են սովորելու. այդ դասընթացներում պատրաստում էին վաշտի, գումարտակի հրամանատարներ:

Չորս ամիս սովորելուց հետո, երբ ռազմաճակատի գիծը մոտենում է Ստալինգրադին, մեր կուրսն օգտագործվեց Ստալինգրադի պաշտպանության համար: Մարտերն ընթանում էին Ստալինգրադի փողոցներում: Մեր կուրսը պաշտպանական մարտեր էր մղում Օկ-



Մանուց Գրիգորյան



Գարեգին Դավթյան



Լազր Ալեքսանյան

տյաբրսկի շրջանում՝ 62-րդ բանակի կազմում: Ռազմաճակատը լուրջուցիչ զորամասերով համալրվելուց հետո մեր կուրսը տեղափոխեցին Աստրախան՝ ըստ զորամասերի նոր նշանակումներ կատարելու համար: Իմ նոր նշանակման հասցեն դարձյալ Ստալինգրադի ռազմաճակատն էր՝ 64-րդ բանակ, 385-րդ գունդ, վաշտի հրամանատար:

1942 թ. նոյեմբերին մեր գունդը պետք է համալրեր 21-րդ բանակը՝ հարձակողական մարտերի նախապատրաստվելու համար:

1942 թ. նոյեմբերի 18-ին մեր բանակը, Ռոկոտովկոն հրամանատարությամբ, Դոն գետ ձախ ափով, մյուս բանակների հետ սկսում է մարտական գործողությունները: Նոյեմբերի 29-ին վիրավորվում եմ եւ տեղափոխվում Չապայեակ քաղաքի ռազմական հոսպիտալ: Ապաքինվելուց հետո ինձ ուղարկում են Կալինինի ռազմաճակատ՝ 8-րդ մոտոմեքենայացված կորպուսի 48-րդ բրիգադ՝ վաշտի հրամանատարի պաշտոնով:

1943 թ. մարտ ամսին կորպուսը մարտեր էր մղում Վելիկի Լուկի եւ Ռեժե քաղաքների ազատագրման համար: Ապրիլին կորպուսը տեղափոխվում է Տուլա՝ կոմպլեկտավորվելու նպատակով, որից հետո 48-րդ բրիգադը վերանվանվում է 68-րդ մոտոմեքենայացված բրիգադի եւ տեղափոխվում 2-րդ Ուկրաինական ռազմաճակատ (հրամանատար՝ Կոնեւ):

Այդ ժամանակ արդեն ավագ լեյտենանտ էի, վաշտի հրամանատար, որի կազմում երեք հրաձգային եւ մեկ գնդացրային դասակներ էին: Այդ զորամասում ծառայեցի մինչեւ 1945 թ. ապրիլի 17-ը: 1943 թ. նոյեմբերի 7-ին մեր զորամասերն անցում էին կատարում Դնեպր

գետի վրայով՝ Ալեքսանդրա քաղաքի ուղղությամբ հարձակումը շարունակելու համար: Եվ ստացանք որոշակալի լուր՝ ազատագրված է Ուկրաինայի մայրաքաղաք Կիևը, ինչը դրականորեն անդրադարձավ զինվորների տրամադրության վրա: Երկու օրվա ծանր մարտերից հետո ազատագրեցինք Ալեքսանդրա քաղաքը եւ ուղղություն վերցրինք դեպի երկաթուղային մեծ հանգույց Ջնամենկա քաղաքը:

Մի քանի դրվագ Ալեքսանդրա քաղաքի համար մղված մարտերից: Նոյեմբերի 10-ին իմ վաշտին առաջադրանք տրվեց՝ խոր ձորի միջով անցնել ձորի մյուս կողմը՝ եման դիրքեր գրավել՝ հյուսիս-արեւմտյան կողմից Ալեքսանդրա քաղաքի վրա հարձակվելու համար: Առաջին օրը վաշտի ուժերով գրավեցինք թշնամու պաշտպանական գիծը եւ քաղաքի հյուսիսային կողմից գրավելով մեկ թաղամաս՝ ամրացրինք գրաված դիրքերը՝ սպասելով հետագա կարգադրության:

Հիտլերականների հակագրոհները հետ էինք մղում: Կրտսեր լեյտենանտ Յուրկինի գնդացիների կրակի տակ թշնամին խուճապահար նահանջում է: Վաշտն իմ հրամանով նորից է գրոհի նետվում՝ գրավելով երկու թաղամաս: Մենք ընդունում ենք շրջանային պաշտպանության մարտավարություն՝ մինչեւ օգնության են հասնում գումարտակի մյուս վաշտերը՝ գումարտակի հրամանատար Կազուբենկոյի հրամանատարությամբ:

Մյուս օրը՝ լուսաբացին, հրետանային՝ կես ժամ տեսած կրակից հետո, մեր գումարտակը՝ մյուս զորամասերի հետ լիովին ազատագրում է Ալեքսանդրա քաղաքը, որի համար 8-րդ կորպուսը

կոչվեց Ալեքսանդրյան: Քաղաքի ազատագրման մարտերին ակտիվ մասնակցելու եւ խիզախության համար պարգևատրվեցին «Կարմիր աստղի» շքանշանով:

Այնուհետեւ կորպուսի զորամասերն ուղղություն վերցրին դեպի Ջնամենկա հանգուցային կայան: Մարտերը սկսեցին 1943 թ. նոյեմբերի 23-ին: Վաղ առավոտյան կազմակերպվեց հրետանային նախապատրաստություն, որից հետո մեր գումարտակը եման դիրքերից անցավ հարձակման: Ճեղքելով գերմանացիների պաշտպանական գիծը, ուռն գոչելով մխրձվեցինք թշնամու խրամատները: Կարճ սվինամարտից հետո գերմանացիները փախուստի դիմեցին՝ մարտադաշտում թողնելով տասնյակ դիակներ ու վիրավորներ: Կեսօրին Ջնամենկա քաղաքն արդեն ազատագրված էր:

Մեր զորքերը հարձակման անցան Կիրովոգրադ քաղաքի ուղղությամբ: Այդ մարտերի ընթացքում՝ նոյեմբերի 27-ին, վիրավորվում եմ աջ թեւից, վաշտը հանձնում 1-ին դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Իվանովին: Բուժման համար ինձ տանում են նույն կորպուսի 66-րդ մեքենայացված բրիգադի բուժական գումարտակ, որից հետո՝ կորպուսի դաշտային հիվանդանոց:

20 օր հոսպիտալում բուժվելուց հետո վերադառնում եմ իմ զորամաս, սակայն այն չեմ գտնում: Ներկայանում եմ կորպուսի շտաբ՝ 68-րդ բրիգադի գտնվելու վայրն իմանալու համար: Հայտնում են, որ 68-րդ բրիգադը գտնվում է շրջափակման մեջ՝ Կիրովոգրադ քաղաքից արեւմուտք: Այդ պահին կազմակերպվում էր մեկ զորային շրջափակման մեջ ընկած մեր զորամասին օգնելու հա-

մար: Ինձ նշանակում են օգնության գնացող զորայան հրամանատարի տեղակալ: Մեր խնդիրն էր՝ մեկ գումարտակի ուժերով ձեռք բերել թշնամու առաջավոր գիծը եւ միանալ շրջափակման մեջ ընկած բրիգադի զորքերին: 7 տանկի պաշտպանությանը 24 ավտոմեքենայից բաղկացած շարայունը՝ բարձած վառելիք ու զինամթերք, երեկոյան ժամը 10-ին առաջ է շարժվում:

Առանց մարտերի 12 կմ առաջ ենք անցնում՝ լուսաբացին գրավելով ուկրաինական Կախովկա գյուղը: Սակայն առավոտյան ժամը 7-ին գյուղում իրարանցում սկսվեց: Մեր հետեւից գյուղ է մտնում մարշալ Կոնսեյ, ով անթույլատելի է համարում գյուղում մնալը: Լորից առաջ ենք շարժվում՝ հանդիպելով թշնամու ոչ մեծ խմբերի դիմադրության: Գիշերը հասնում ենք շրջափակման մեջ ընկած մեր զորամասին:

Ես ներկայանում եմ 68-րդ բրիգադի շտաբ՝ հիմնական զորամասում ծառայությունս շարունակելու համար: Սակայն շարքային կապավորն ինձ հայտնում է՝ քո «իզվեչ-չենին» ուղարկվել է ծնողների, որպես անհայտ կորածի. հեռագրում եմ Գորիսի զինկոմիսարիատ տեղեկացնելով, որ ես ողջ եւ առողջ եմ: Կիրովոգրադ քաղաքը գրավելուց հետո մեզ ուղարկում են 2-րդ էջելուն՝ հանգստանալու, որտեղից 8-րդ կորպուսն ուղարկվում է Մինսկ՝ համալրվելու համար՝ մտնելով Բելառուսական 2-րդ ռազմաճակատի մեջ:

1944 թ. հոկտեմբերին 8-րդ կորպուսը մտցվում է Բելառուսական 2-րդ ռազմաճակատի կազմի մեջ (ռազմաճակատի հրամանատար՝ մարշալ Ռոկոսոսկի):

Շարժվում ենք դեպի Լեհաստանի սահմանը: Նշանակված վայրում սկսում ենք զինվորներին վարժեցնել հարձակողական գործողությունների՝ անձանոթ անտառային, ձածնոտ միջավայրում: Այսպիսի մի վարժությունից հետո կանգ ենք առնում լեհական մի գյուղում: Մեր գումարտակի հրամանատարը (1-ին գումարտակ) մայր Կոյտովն էր, իսկ ես՝ նույն գումարտակի 3-րդ վաշտի հրամանատարը: Գումարտակը տեղավորվեց գյուղի առանձնատներում: Տեղավորվելուց հետո ինձ կանչեցին գումարտակի հրամանատարի մոտ: Ներկայանում եմ մայր Կոյտովին, ում մոտ կանգնած էր մի կապիտան. երեկոյան ժամը 11-ն է:

Մայրն ինձ տեղեկացնում է, որ կապիտանը եկել է մեզ մոտ՝ վաշտի հրամանատար նշանակվելու նպատակով, սակայն հիմա գումարտակում այդպիսի թափուր տեղ չկա, թող քեզ մոտ պրակտիկա ձեռք բերի, մինչեւ թափուր տեղ կլինի: Գումարտակի հրամանատարն ինձ չծանոթացրեց կապիտանի հետ, անգամ անուն-ազգանունը չիմացա, ոչ էլ ինքն իմացավ իմ անուն-ազգանունը: Կապիտանի հետ գնում ենք իմ վաշտի՝ գյուղի ծայրամասում հատկացված տները: Իմ սենյակում կրտսեր լեյտենանտ Յուրկինը նորեկ կապիտանին հարցնում է, թե ո՞նց է Ձեր ազգանունը:

- Ապետնակ Մարտիրոսյան, - պատասխանում է կապիտանը: Ես չվարում եմ՝ ինչու մինչեւ հիմա կապիտանի ազգանունը չեմ հարցրել: - Դուք հայ եք, - հարցնում եմ ես: - Այո, հայ եմ՝ Հայաստանի Գորիսի շրջանի Յայջի գյուղից, - պատասխանում է կապիտանը: Արդեն հայերեն եմ հարցնում. «Դուք Սեդրակի եղբայրն եք»:

- Այո, - պատասխանեց կապիտանը: - Ես էլ հայ եմ, նույն գյուղից, Ձեր խնամի Բեգլարի տղա Մանուցն եմ: Մենք իրար դժվար էինք

Խաչատուր (Ներսես) Ներսիսյանի հիշատակին կանգնեցված այս հուշարձանի մոտից էր գյուղը իր գավակներին ճանապարհում ճակատ

ճանաչում, ինքը գյուղից Ղափան էր տեղափոխվել: Իրար ճանաչելուց հետո գրկախառնվեցին...

Կարգադրում եմ վաշտի ավագին՝ Իգնատովին, որ մեզ համար խմելու եւ ուտելու բան բերի, մինչույն ժամանակ կանչում եմ գումարտակի զինբժշկին՝ Սերգեյ Մանուչարյանին, ով Ղարաբաղի հայ էր: Ամբողջ գիշերը երեքով զրուցեցինք, երգեցինք, ուրախացանք: Գումարտակի հրամանատարը լսել էր իմ եւ կապիտանի՝ համագյուղացի լինելու մասին: Նրան հաջորդ օրը հրավիրում եմ վաշտ եւ նորից նշում ենք համագյուղացու հետ հանդիպումը:

Հունվարի 12-ին մեր՝ 8-րդ կորպուսն առաջադրանք է ստանում շարժվել դեպի Լեհաստանի խորքերը: Մարենվերդեն (Մարենբուրգ) քաղաքի համար մղվող մարտերում իմ հրամանատարությանը վաշտն առաջին է մտնում քաղաք, գրավում երկաթուղային կայարանը, որտեղ՝ երեք էջելուն՝ շուրջ 300 վագոն ռազմական տեխնիկայով ու ռազմամթերքով: Կայարանում հայտնաբերում ենք նաեւ պարենային պահեստ, այդ մարտերում գոհվում է նաեւ մեր գումարտակի առաջին վաշտի հրամանատարը, ում փոխարեն նշանակվում է համագյուղացի՝ կապիտան Ապետնակ Մարտիրոսյանը:

Չետագա գործողությունների ժամանակ կապիտան Մարտիրոսյանը թեթեւ վիրավորվում է դեմքից: Նրան ուղարկում են բուժմաս, իսկ ես երկու վաշտի միացյալ ուժերով կատարում եմ քաղաքի մերձակա կամուրջները գրավելու առաջադրանքը: Հինգ օր հետո պոնտոնային կամրջով անցնում ենք Վիսլա գետը: Հարձակողական գործողություններ ենք սկսում Բայթիկ ծովի ուղղությամբ: Գրավում ենք Բյուտով եւ Պիսա քաղաքները, շարժվում դեպի Խոյնից քաղաք: Այդտեղ էլ իմ վաշտն առաջին է մտնում քաղաք, որի կենտրոնում ձեռնամարտ է սկսվում մեր եւ գերմանացիների միջեւ: Իմ եւ մի գերմանացու միջեւ իսկական մենամարտ է տեղի ունենում, նրան կարողանում եմ տապալել գետին: Մեծ թվով գերիներ ենք վերցնում, նրանցից իմանում ենք թշնամու ուժերի տեղաբաշխվածության մասին տեղեկություններ: Մինչեւ օրվա ավարտը քաղաքը մաքրում ենք գերմանացիներից:

Այդ մարտերից հետո իմանում եմ, որ փաստաթղթեր են պատրաստվում ինձ Սովետական Միության հերոսի կոչման ներկայացնելու համար, բայց հետո այդ նախաձեռնությունը, չգիտեմ ինչու, մնաց կես ճանապարհին:

Ապրիլի 17-ին ծանր վիրավորվեցի...

Թամանյան դիվիզիայի զինվոր Գարեգին Ծերունի Դավթյանի մարտական ուղին նույնպես ներկայացնում ենք ըստ նրա հուշերի, որ մեզ է տրամադրել զինվորի որդի Մելիկ Դավթյանը:

... Ծնվել եմ 1909 թ. Գորիս շրջանի Յայջի գյուղում: 1931 թ. զորակոչվել եմ սովետական բանակ, ծառայել Հայկական հրաձգային դիվիզիայի 2-րդ գնդի գնդադրային վաշտում: Զինվորական պարտադիր ծառայությունն ավարտելուց հետո վերադարձել եմ հայրենի գյուղ եւ մասնակցել նոր կազմակերպված կոլտնտեսության աշխատանքներ:



Խորհրդային Միության սյունեցի հերոսները

- Սամսոն Մովսեսի Մկրտումյան (գ. Բռնակոթ),
- Գուրգեն Միրզայի Արզումանյան (գ. Խնձորեսկ),
- Լիպարիտ Միրզոյի Իսրայելյան (գ. Բռնակոթ),
- Հունան Մկրտչի Ավետիսյան (գ. Ծավ),
- Սուրեն Սմբատի Առաքելյան (գ. Տաթև),
- Միքայել-Սուշեղ Աղաթեյի Հարությունյան (գ. Գեղանուշ),
- Արամայիս Ասատուրի Մարկիսով (գ. Տեղ),
- Գոգա Գրիգորի Աղամիրով (Աղամիրյան) (գ. Նորաշենիկ),
- Մեղրանիկ Ալեքսանդրի Մանուկյան (գ. Բնունիս),
- Գեորգի Արկադիի Առուստամյան (գ. Շաղատ),
- Գրիգորի Շահամի Կալուստով (գ. Զարահունջ):

րին: Այնուհետև՝ մինչեւ 1941 թ., աշխատել եմ Գորիսի միլիցիայի հեծյալ դասակում:

Երբ սկսվեց Մեծ հայրենակառնը, շատերի թվում ես էլ զորակոչվեցի բանակ: 1941 թ. դեկտեմբերին, երբ ծնունդ առավ Հայկական փառապանծ Թամանյան դիվիզիան, ինձ նշանակեցին ջոկի հրամանատար 400-րդ գնդի դպրոցի գնդապետի դասակում, որը ժամանակ անց՝ դասակի հրամանատարի տեղակալ:

Դիվիզիայի կազմում՝ Հյուսիսային Կովկասից (Գրոզնի քաղաքի մատուցներից) մինչեւ Բեռլին մասնակցել եմ մարտական գործողություններին: Մասնակցել եմ հատկապես Մալգոբեկ, Մոզդուկ, Ստավրոպոլ, Նովոռոսիսկ, Թաման քաղաքների, Կրասնոդարի երկրամասի համար մղված ճակատամարտերին ու դրանց ազատագրմանը: Մասնակցել եմ Ուկրաինայի մի շարք քաղաքների ու գյուղերի ազատագրմանը:

1944 թ. աշնանը 89-րդ Թամանյան դիվիզիան մտել է Լեհաստան: Կռվել ենք Վարշավայի ազատագրման համար, մասնակցել եմ Վիսլա գետի մոտակայքում տեղի ունեցած մարտերին: 1945 թ. փետրվարի առաջին օրերին հաղթականորեն մտանք Գերմանիայի հողը, դիրքեր գրավեցինք Օդեր գետի ափին: Իսկ փետրվարի 6-ին հրաման ստացանք անցնել Օդեր գետը: Սակայն ոյրորին չէր գետն անցնելը. նախ՝ գետը սառած էր, իսկ մյուս ափին թշնամին ուժեղ պաշտպանություն էր կազմակերպել:

Մեր դիվիզիայի հրետանավորներն ուժեղ կրակի տակ վերցրին գետի մյուս ափը, իսկ դիվիզիայի սակրավորները գետի առաջից վրա տախտակներ ավելացրին, եւ դիվիզիայի 390-րդ գնդի զորամասերն այդ գիշեր սառույցի վրայով անցան գետը: Գրոհեցինք հիտլերականների դիրքերի վրա եւ մի փոքր տարածության վրա պլացդարմ ստեղծեցինք: Փետրվարի 7-ին, երբ լույս

Մեծ հայրենականում զոհված հարժխեցիների հիշատակը հավերժացնող հուշարձան

անգամ վիրավորվել եմ՝ Նովոռոսիսկյան՝ 1943-ին, Կերչում՝ 1943-ին, Գերմանիայում՝ 1945-ին:

Պարգևատրվել եմ Կարմիր աստղի՝ երկու, Կարմիր դրոշի՝ երկու եւ մի շարք այլ մեդալներով ու ջրանշաններով: Ինձ համար հատկապես թանկ է Սովետական Միության մարշալ Ժուկովի ստորագրությամբ եւ նրա կողմից տրված պատվոգիրը (25 հոկտեմբերի 1945 թ.):

Լազր Ավանեսի Ալեքսանյան. ծնվել է 1922 թ. հունվարի 5-ին Հարժիս (Յայջի) գյուղում:

Գյուղի յոթամյան 1937 թ. ավարտելուց հետո սովորել է Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումում, որն ավարտել է 1941-ի հունիսի 22-ին:

Աշխատանքի է նշանակվել Գորիսի շրջանի Խոտի կոլտնտեսությունում՝ անասնաբույծ-ինժեներ (1941 թ. հուլիսից մինչեւ նույն տարվա օգոստոսի 17-ը):

1941 թ. օգոստոսի 17-ին, որպես կամավորական, մեկնել է բանակ: Սկզբնական շրջանում ծառայում էր Կրասնոսի Գորի քաղաքում: Նույն տարվա նոյեմբերին գործուղվել է Բաքվի սպայական դպրոց:

1942 թ. Հյուսիսային Կովկասում իրավիճակը լարվելու պատճառով սպայական դպրոցի սաները, առանց դասընթացն ավարտելու, ուղարկվել են Նովի Աֆոն, Գագրա, Թբիլիսի, այնտեղից էլ՝ ռազմաճակատ:

1942 թ. վերջին, մարտական գործողությունների ընթացքում, վիրավորվել է ուղարկվել է Թբիլիսիի ռազմական հոսպիտալ: 45 օր բուժում ստանալուց հետո կրկին ուղարկվել է մարտադաշտ:

1943-ի սկզբին մասնակցել է Հյուսիսային Կովկասում մղվող մարտական գործողություններին: Այնուհետև տեղափոխվել է Մերձբայթյան ռազմաճակատ՝ գրոհային բրիգադ, որտեղ եւ ծառայել է մինչեւ պատերազմի հաղթական ավարտը: Մասնակցել է Լատվիան գերմանացիներից ազատագրելուն: Հրամանատարության կողմից քանիցս արժանացել է բարձր գնահատականի՝ մարտական գործողություններին ակտիվ մասնակցելու համար:

1945-ին տեղափոխվել է Պետրոգավոդսկ, որտեղից էլ 1946-ի դեկտեմբերին զորացրվել է:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Հարգելի սյունեցիներ
Տեղեկացնում ենք, որ այս պահի դրությամբ Սյունիքի մարզում առկա է նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման հետեւյալ պատկերը.

- Հիվանդներ՝ 15 հոգի, նրանցից
 - 13 հոգի՝ Քաջարանում,
 - 1 հոգի՝ Գորիսում,
 - 1 հոգի՝ Մեղրիում:
- Վարակահիւրներից 5 հոգի գտնվում է Երեւանում, 10 հոգի՝ Կապանի բժշկական կենտրոնում:
- Բուժվել է 24 հոգի,
Մեկուսացված է 25 հոգի,
Ինքնամեկուսացված՝ 163 հոգի:*
- Սյունիքի մարզպետ Յուրան Պողոսյանը համավարակի դեմ



պայքարի մարզային աշխատանքային թիմի մասնակցությամբ մարզպետարանում անց է կացրել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են իրավիճակի հետ կապված աշխատանքների համակարգման ու կազմակեր-

պական այլ հարցեր, տրվել են հանձնարարականներ:

Հարգելի քաղաքացիներ, չնայած այսօրվանից արտակարգ դրության պայմաններում ազատ տեղաշարժի ու մի շարք այլ սահմանափակումներ դադարել են գործել, համավարակի վտանգը շարունակում է մնալ, ուստի կարեւոր է յուրաքանչյուրիդ բարձր գիտակցությունը, կարգապահությունն ու պատասխանատու վերաբերմունքը. շարունակեք խստորեն պահպանել անվտանգ վարքի ու պիտանահանման հետ կապված՝ ՀՀ ԱՆ եւ պարետատան ցուցումները:

www.syunik.mtad.am
5 մայիսի 2020թ.



Շմալոն Մարտիրոսյանը (ձախից՝ առաջինը) առաջադրանքը կատարելուց հետո մարտական ընկերների հետ, 1942թ., 13-րդ դեկտեմբերի

Մարտական օդաչուն՝ Նորաշենիկից

վերետում: Նույն թվականին այլ մարտերում դրսևորած արիության համար արժանացավ «Կարմիր դրոշի» շքանշանի: Պարգևատրվել է նաև «Վիեննայի գրավման համար», «Բուդապեշտի գրավման համար» եւ այլ մեդալներով:

Իր բաժնի պատերազմն ավարտելուց հետո աշխատել է Արտաշատի մետաքսի կոմբինատի տնօրեն, այնուհետեւ՝ մոտ 20 տարի (1948-1967 թթ.) Կապանի օդանավակայանի տնօրեն: Պատերազմի դաշտում ձեռք բերած փորձն ու հմտությունը, ինչպես նաև մարդկային որակները՝ (պարկեշտություն, անկեղծ հարգանք մեծի ու փոքրի հանդեպ, սկզբունքայնություն) նպաստեցին, որ լավագույնս կազմակերպի Կապանի օդանավակայանի աշխատանքները: Երբեմն էլ, երեւի մտաբերելով պատերազմական տարիների մարտական թռիչքները, ինքնաթիռի խցիկ էր մտնում, կարճատե թռիչքներ կատարում Կապանի երկնքում: Արդեն խաղաղ պայմաններում վերապատրաստման դասընթացներ է անցել Ույանովսկում, թարմացրել եւ ավելացրել ավիացիային առնչվող գիտելիքները: Արժանացել էր «ԽՍՀՄ օդային նավատորմի գերագանցիկ» կրծքանշանի, քաղաքացիական ավիացիայի մատուցած ծառայությունների համար՝ պարգևատրվել է ՀՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով:

Պատերազմը նաև մարտական ընկերներ պարգևեց. Ռազմաօդային ուսումնարանում սովորելիս առաջին իսկ օրվանից մտերմացավ Վիկտոր Կոյադի-նի հետ (ծագումով՝ Դոնբասից): Ավարտելով ուսումնարանը՝ միասին մեկնեցին ռազմաճակատ: Մեկ անգամ չէ, որ օդային մարտի ժամանակ նեցուկ են եղել իրար, փրկել միմյանց կյանքը: Ստացվեց այնպես, որ բաժանվեցին իրարից. տարբեր ռազմաճակատներում էին, բայց եղբայրությունն ու բարեկամությունը շարունակում էին: Շմալոնը Վիկտորից կարճ հաղորդումներ էր ստանում. «20-րդ ֆաշիստական ինքնաթիռը վայր գցեցի, չորրորդ «Կարմիր դրոշի» շքանշանը ստացա, իմացա, որ պարգևատրվել ես «Կարմիր դրոշի» շքանշանով, շնորհավորում եմ...»:

Եթե պատերազմից հետո Շմալոն Մարտիրոսյանը վերադարձավ հայրենի Կապան, Վիկտորը որոշեց մնալ բանակում, հիմնավորապես զբաղվել ռազմաօդային գործի ուսումնասիրությամբ, ավարտեց ռազմաօդային ուժերի ակադեմիան, ԽՍՀՄ զինված ուժերի Գերագույն շտաբի ակադեմիան, արժանացավ խորհրդային Միության վաստակավոր օդաչուի կոչման, նրա կրծքին փայլում էր խորհրդային Միության հերոսի ոսկե աստղը...

Երկար որոնումներից հետո երջանիկ մի դիպվածով հաջող-

վեց գտնել Շմալոնին, եւ նախկին ծակատային ընկերները հանդիպեցին նախ՝ Բաքվում, որտեղ զինվորական բարձր պաշտոն էր զբաղեցնում Կոյադինը (Անդրկովկասյան զինվորական օկրուգի հակաօդային պաշտպանության իրամասնատար էր), հետո՝ հանդիպում եղավ Կապանում: Շատ բան ունեին հիշելու զինակից ընկերները: Պատերազմական օրերի հիշողությունները երբեմն ուղեկցվում էին արցունքներով: Կոյադինն ու Մարտիրոսյանը Կապանի մշակույթի պալատում քաղաքի հասարակության առջև հանդես եկան հուշերով, ներկայացրին երկրորդ աշխարհամարտի օրերի հետաքրքրական եւ անսովոր դրվագներ:

Շմալոն Մարտիրոսյանը երկրային կյանքին հրաժեշտ է տվել 1985 թվականին:

...Մեծ հաղթանակից մեզ 75 տարի է արդեն բաժանում: Թեպետ կորոնավիրուսի տարածման հարուցած դժվարություններին՝ տոնը մնում տոն, եւ հավուր պատշաճի այն պիտի նշվի: Այս տոնը հուզմունքով էին նշում նախկին ծակատայինները, ովքեր այժմ չկան: Վաղիկ Մարտիրոսյանը հիշում է, որ մայիսի 9-ին հայրը, արցունքն աչքերին էր մտաբերում զինակից ընկերներին, հատկապես՝ այն սկսնակ օդաչուներին, որոնց առաջին մարտական թռիչքը վերջինը եղավ...
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մայիսի 4-ից նոր փոփոխություններ են տեղի ունեցել արտակարգ դրության ընթացքում կիրառվող սահմանափակումներում

Մայիսի 4-ից նոր փոփոխություններ են տեղի ունեցել արտակարգ դրության ընթացքում կիրառվող սահմանափակումներում: Մասնավորապես՝

Տեղաշարժի իրավունքի մասով՝

- Չանվում են ազատ տեղաշարժման սահմանափակումները, այսինքն՝ տեղաշարժման թերթիկի կարիք այլևս չի լինի,
- Շարունակում է գործել հանրային տրանսպորտի արգելքը,
- Արդեն իսկ հանվել էին միջմարզային սահմանափակումները: Այս մոտեցումը պահպանվում է,
- Փոխարենը՝ վարակի տարածումից կամ օջախային լինելու ռիսկից կախված՝ կարող է ժամանակավորապես փակվել առանձին համայնքների ելումուտը,

Տնտեսական սահմանափակումների մասով՝ արդեն գործող տեսակներին ի լրումն թույլատրվում են՝

- Ամբողջ մշակող արդյունաբերությունը, այդ թվում՝ տեքստիլը, կահույքը, կոշիկը, պոլիգրաֆիան եւ այլն,
- Շինարարության ավարտական փուլի աշխատանքները,
- Մեծածախ եւ մանրածախ առևտուրը, սակայն՝ միայն մասնագիտացված ու ոչ մասնագիտացված խանութներում ու կրպակներում: Մոլերը, առևտրի կենտրոնները եւ շուկաները շարունակում են փակ մնալ, դրանցում կարող են գործել միայն սննդամթերքի ու գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի կետերը, դեղատները,
- Հանրային սննդի կազմակերպման մասով՝ ռեստորանների,



բարերի, սրճարանների, պանդոկների գործունեությունը բացառապես բացօթյա տարածքում,

- Տեղեկատվության եւ կապի ոլորտն ամբողջությամբ,
- Բուսաբանական եւ կենդանաբանական այգիների ու բնության հատուկ պահպանվող տարածքների, արգելոցների գործունեությունը,
- Սպորտային ակումբների ու օբյեկտների գործունեությունը՝ բացառապես պրոֆեսիոնալ մարզիկների մասնակցությամբ սպորտային միջոցառումների անցկացման եւ մարզումների իրականացման համար:
- Անհատական ծառայություններից՝ լվացման, մաքրման եւ չոր մաքրման ծառայությունները, վարսավիրանոցների, գեղեցկության սրահների, մարմնի խնամքի ծառայությունները:

Կանոններ
Ձուգահեռաբար բոլոր թույլատրված ոլորտների համար գործում են գործունեության կազմակերպման պարտադիր կանոններ, որոնք չպահպանելը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը: Միաժամանակ, ուժեղացվելու է վերահսկողությունը կանոնների պահպանման նկատմամբ:

<https://covid19.gov.am/>

I-IV դասարաններում գնահատականները կչեղարկվեն

Ուսումնական գործընթացի առնչված առաջին 4 տարիների ընթացքում գնահատականներ չեն լինի, կլինեն խրախուսումներ, այնպես, ինչպես հիմա I դասարանում է, այս մասին ֆեյսբուքյան ասուլիսի ժամանակ տեղեկացրեց ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանը:

«Սա լավ համակարգ է, որը հնարավորություն է տալիս երեխային կապել գիտելիքի հետ, ոչ թե թվանշանի: Սա հանրակրթության ոլորտում լուրջ բարեփոխումներ կբերի», - ասաց նախարարը՝ խոստանալով, որ դա կիրականացվի շատ շուտով:

ԿՈՐԵԼ Է // Դավիթ Միհրանի Միրումյանի AB N131747 դիպլոմը՝ տրված Գորիսի պետական համալսարանի կողմից 2011 թ. մայիսի 29-ին, «Տեսական տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Գրանցման N 3109, 10 հունիսի 2011 թ.: Համարել անվավեր:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՐԱՏԱՐԱՎԿԻԶ
«ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱԾԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆՎԵՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱԿԱՎՈՐ ԽԱՆՁԵՐԻՄ

ՊԱՄԱԿԻՐ ԱՄԵՆԱՄԱՆՅԱՆ

Հասցե՝	Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝	(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47E
Էլ. փոստ՝	syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝	www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԳ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

(R) նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 06.05.2020թ.: